**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 93 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված

Փարաքար համայնքի ավագանու

2022 թվականի  նոյեմբերի 26-ի N 93-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ
# ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

# ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Փարաքար**

**2022**

# Բովանդակություն

**Համայնքի ղեկավարի ողջույի խոսք** ..... 4

1.**Համայնքի իրավիճակի նկարագրություն,վերլուծություն և  վերլուծման հիմնական ենթաբաժինները** ..... 5

1.1 Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... 5

1.2 Ժողովրդագրություն ..... 12

1.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ ..... 15

1.4 Անշարժ գույքի կառավարում ..... 18

1.5 Քաղաքաշինություն և հողաշինություն ..... 20

1.6 Տարածքային զարգացում և բնակարանային-կոմունալ տնտեսություն ..... 20

1.7 Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում ..... 22

1.8 Հողօգտագործում ..... 23

1.9 Գյուղատնտեսություն ..... 25

1.10 Բնության և շրջակա միջավայրի պահպանություն ..... 26

1.11 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն ..... 27

1.12 Առևտուր և սպասարկում ..... 27

1.13 Համայնքի ձեռնարկություններ ..... 30

1.14 Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ ..... 78

1.15 Զբոսաշրջություն և հանգիստ ..... 36

1.16 Առողջապահություն,սոցիալական ոլորտ ..... 37

1.17 Հանգստի գոտիներ,զբոսայգիներ,խաղահրապարակներ ..... 41

1.18 Բնության և շրջակա միջավայրի պահպանություն ..... 41

1.19 Աղետների ռիսկերի կառավարում ..... 42

**2. Համայնքի հիմնախնդիրների սահմանում** ..... 43

2.1 Համայնքի 2022-2026թթ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ 43

2.2 Համայնքի ֆինանսական իրավիճակների նկարագրումը և ֆինանսական կանխատեսումները ........ 50

2.3 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն ........ 51

2.4 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ........ 54

**3. Համայնքի նպատակների և գոծողություններին պլանավորում** ........ 55

3.1 Համայնքի զարգացման տեսլականը ........ 55

3.2 Համայնքում իրականացվող ծրագրեր ........ 58

3.3 ՀՀՋԾ ֆինանսավորում ........ 60

**4 . Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովագրվածների ձևակերպում և ամփոփում** ........ 63

4.1 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1 ........ 63

4.2 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2 ........ 64

4.3 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3 ........ 66

4.4 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4 ........ 69

4.5 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5 ........ 70

4.6 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6 ........ 72

4.7 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 7 ........ 74

4.8 ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 8 ........ 75

**Վերջաբան** ........ 77

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ



Ողջունում եմ Ձեզ՝ սիրելի բնակիչներ, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Շնորհակալություն, համայնքի զարգացման ծրագրում համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Առաջիկա հինգ տարիներին Փարաքար համայնքի զարգացումն ապահովելու համար մեր առջև ծառացած են լուրջ մարտահրավերներ, որոնք հաղթահարելու համար մեզ լուրջ, ծանր և պատասխանատու աշխատանք է սպասվում:Բոլորիս միասնական ուժերի և համագործակցության միջոցով միայն կարող ենք հասնել Փարաքար համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը, համայնքի սոցիալական, տնտեսական, բնապահպանական և այլ խնդիրների լուծմանը:

Փարաքար համայնքում նախատեսել ենք կատարել մի շարք առաջնային ծրագրեր, որոնք ընդգրկում են համայնքի զարգացման բոլոր ուղղությունները և իհարկե բոլոր բնկավայարերը հավասարաչափ:Դրանք են՝

- Փարաքար համայնքի բազմաբնակարան շենքերի վերանորոգումն ու բարեկարգումը,
- մանկապարտեզների ինչպես հիմնանորոգում, այնպես էլ նորոգում և բակային տարածքների բարեկարգում,
- ասֆալտապատման աշխատանքների իրականացում, որոնք նաև խթան կհանդիսանան նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ
- կրթության, մշակութային, առողջապահության,երիտասարդության,հանգստին և սպորտին առնչվող միջոցառումներ,
- զբոսաշրջությանն ուղղված միջոցառումներ,

- ❖ համայնքում կլուծվի կարևորագույն խնդիրներից մեկը՝ ոռոգման ցանցը, որը բազմահարյուր բնակիչների համար ապրուստի վաստակման միջոց է հանդիսանում:

Այս ծրագրերից բացի համայնքապետարանը իրականացրել և իրականացնելու է նաև այլ համայնքային խնդիրներ, որոնք կատարվում են պարբերաբար: Դրանք են՝

- ❖ աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի մշտական բարելավում,
- ❖ շուրջօրյա ջրամատակարարում և ջրահեռացում, կանաչապատ գոտիների պահպանում և ընդլայնում,
- ❖ համայնքում զոհվածների և սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական և խորհրդատվական աջակցություն,
- ❖ համայնքային,սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ:

Զարգացման ծրագրի իրագործումը հնարավորություն կտա տեսանելի դարձնել համայնքի ցանկալի տեսլականը, որը բխում է համայնքի բնակչության շահերից: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կազմման գործընթացում իրենց մասնակցությունն ունեն համայնքային ենթակայության բոլոր կազմակերպությունները՝ հանդես գալով իրենց առաջարկություններով և վերլուծություններով:

Հաջող և արդյունավետ աշխատանքային տարիներ եմ մաղթում բոլորիս, որոնք պետք է հանգեցնեն Փարաքար համայնքի զարգացմանն ու ծաղկմանը:

Շնորհակալություն բոլորին:

# 1.Համայնքի իրավիճակի նկարագրություն,վերլուծություն և վերլուծման հիմնական ենթաբաժինները

## 1.1 Համայնքի իրավիճակի նկարագրություն

**Փարաքար համայնք**

Համայնքը կազմավորվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Արմավիրի մարզում կայացած համամասնական ընտարակրգով ՏԻՄ ընտրությունների արդյունքում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատատարածքային բաժանման մասին»

օրենքում կատարված փոփոխությունների: Փարաքար համայնքի վարչական բնակավայրերն են՝

- Փարաքար
- Թաիրով
- Մերձավան
- Մուսալեռ
- Արևաշատ
- Նորակերտ
- Բաղրամյան
- Այգեկ
- Պտղունք



Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար բնակավայրը նախկինում կոչվել է Շիրաբադ, Պարակար անվանումները: Փարաքարում կան տուֆի և կավի հանքեր: Կավահանքը անվանվել է նաև փրփրաքար, ըստ ժողովրդական ստուգաբանության այս բառի աղավաղումից էլ առաջացել է «Փարաքար» անվանումը: Համայնքը տեղադրված է Միջինարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 870 մ բարձրություն: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Պեղումների ժամանակ Փարաքար բնակավայրից 1,5 կմ հեռավորության հյուսիս բլրաշարի վրա հայտնաբերվել են աշտարակ-մեհյանի ավերակներ, որի

մուտքի մոտ գտնվել է արամեական արձանագրության բեկորներ, որը վկայում է, որ այն կառուցել է Արտաշես I՝ մ.թ.ա. 189-161 թթ: Բնակավայրում կառուցված է Սբ. Հարություն եկեղեցին:

Փարաքարի տարածքով անցնում են Երևան-Զվարթնոց օդանավակայան, Երևան-Էջմիածին-Արմավիր հանրապետական և Երևան-Մերձավան տեղական նշանակության ճանապարհները: Այստեղ գտնվում է Զվարթնոց օդանավակայանը:

## Թաիրով բնակավայր



Թաիրով բնակավայրը հիմնադրվել է 1946 թվականին: Իր անունը ստացել է ի պատիվ հայտնի պտղաբույծ, հայազգի մեծ գիտնական, գինեգործ Արշալույս Թաիրյանի: Այն գտնվում է մայրաքաղաքից՝ 9 կմ, մարզկենտրոնից 36 կմ հեռավորության վրա:

Թաիրով բնակավայրը տեղադրված է Միջինարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 870 մ բարձրություն: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

## Մերձավան բնակավայր



Մերձավան բնակավայրը գտնվում է մայրաքաղաքից՝ 11 կմ, մարզկենտրոնից 40 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ակադեմիա, Խաղողագործության և գինեգործության ինստիտուտի փորձառական բազային կից ավան անվանումները: Մերձավան է վերանվանվել 1965 թ-ին: Հիմնադրվել է 1947 թ-ին Ղռերի տեղում, որտեղից շինաքար են արդյունահանել որպես փորձառական բազային կից ավան, այդ պատճառով էլ այն կոչվել է Ակադեմիա:

Բնակավայրը գտնվում է Միջինարաքսյան հարթավայրում, Քասաղ գետի հովտում, ծովի մակարդակից ունի 945 մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -30-ից -50 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից բնակավայրն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

## Մուսալեռ բնակավայր



Մուսալեռ բնակավայրը գտնվում է Արմավիրի մարզի արևելյան մասում ՝ Երևան-Էջմիածին մայրուղու աջ և ձախ կողմերում՝ Փարաքար և Պտղունք բնակավայրերի միջև: Հեռավորությունը մարզկենտրոնից 32կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 13կմ:

Ծովի մակերևույթից բնակավայրի բարձրությունը 855մ է, գրանցված ամենաբարձր ջերմաստիճանը՝ +40°C, ամենացածրը՝ -25°C:

Նախկինում բնակավայրը կոչվել է Նասիրապատ, Ներսեսապատ, Շաղրլու, Գինեվետ, Ա. Միկոյանի անունով, իսկ 1972թ-ից կրել է պատմական Մուսալեռ անվանումը:

## Արևաշատ բնակավայր



Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ բնակավայրը գտնվում է Երևան-Էջմիածին մայրուղու ձախ կողմում, Մուսալեռ բնակավայրից հետո, «Զվարթնոց» օդանավակայանի անմիջական հարևանությամբ: Նախկինում անվանվել է Վարմազյար, 1953թ. անվանակոչվել է Արևաշատ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա, ամենաբարձր ջերմաստիճանը +40 C է,

ամենացածրը` -25C, տեղումների քանակը նորմային մոտ (չորային), հեռավորությունը մարզկենտրոնից` 37կմ է, մայրաքաղաքից` 15կմ: Բնակավայրի վարչական տարածքը 383.04 հա է:

## Նորակերտ բնակավայր



Արմավիրի մարզի հյուսիս–արևելյան մասում, ծովի մակերևույթից 930.0մ բարձրության վրա, նախալեռնային գոտի է, գտնվում է ՈՒոց-Կոտայք-Շամիրամ գոտում, մարզկենտրոնից հեռավորությունը 32կմ է, իսկ մայրաքաղաքից` 17կմ: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը` շոգ, հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն:

## Բաղրամյան բնակավայր



Բաղրամյան բնակավայրը հիմնադրվել է 1947 թ-ին որպես ավան և իր անվանումը ստացել է ի պատիվ մարշալ Հովհաննես Բաղրամյանի, 1995 թ-ի վարչատարածքային ռեֆորմից հետո այն դասվում է գյուղական բնակավայրերի շարքը: Բաղրամյանի հեռավորությունը մարզկենտրոնից 32կմ է, իսկ մայրաքաղաքից` 15 կմ:

Բնակավայր տեղադրված է Միջինարաքսյան հարթավայրում՝ ծովի մակարդակից 945 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռը

սկսվում է դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից բնակավայրն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

## Այգեկ բնակավայր



Այգեկ բնակավայրը գտնվում է Երևան քաղաքից՝ 14կմ, մարզկենտրոնից 39կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից 943մ է: Համայնքը երկկողմանի ճանապարհով միացված է Երևան-Էջմիածին մայրուղուն:

1947 թվականին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշմամբ Արարատյան դաշտի անմարդաբնակ, քարքարոտ, անջրդի հողերի վրա հիմնադրվել է բնակավայր, որը կոչվել է Նուշի սովխոզ: Հետագայում համայնքը վերանվանվել է 15-րդ սովխոզ, Կարմիր դրոշ սովխոզ, իսկ 1970-ական թվականներից կոչվում է Այգեկ:

Բնակավայրը բնակեցվել է Հայաստանի տարբեր շրջաններից եկած, Արևմտյան Հայաստանից ներգաղթած մարդկանցով, ովքեր շենացրել են երբեմնի պապակ հողերը:

## Պտղունք բնակավայր



Պտղունքի հեռավորությունը մարզկենտրոնից 33 կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 15: Հիմնադրվել է որպես ավան և կոչվել է Բաղրամյանի անվան սովխոզին կից ավան, Պտղաբուծական սովխոզ N9: Պտղունք է վերանվանվել 1957 թվականին: Բնակավայրը տեղադրված է Միջինարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 870 մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր ենածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից բնակավայրն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

### 1.2 **Ժողովրդագրություն**

Տարեսկզբի դրությամբ Փարաքար գյուղական բնակավայրի մշտական բնակչությունը կազմել է 6376 մարդ, բնակավայրը զբաղեցրել է 718 հա տարածք: Այժմ համայնքի ընդհանուր տարածքը կազմում է 5989.26 հա, իսկ բնակչությունը՝ 28 964 մարդ, այդ թվում՝

- Տղամարդկանց թիվը – 14 519 մարդ
- Կանաց թիվը – 14 445 մարդ

- Թոշակառուների թիվը –3049մարդ
- Տեղահանվածներ – 81 մարդ
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 86մարդ
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 5 մարդ
- Հաշմանդամներ – 678 մարդ
- Ընտանեկան նպաստի պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը – 385 ընտանիք
- Զոհվածների ընտանիքներ-155 ընտանիք
- տնային տնտեսությունների թիվը – 6210 տնային տնտեսություն




Աղյուսակ 1-ում ներկայացված է համայնքի բնակչության կազմը ըստ բնակավայրերի:

| Հ/Հ | Բնակավայրեր | Տղամարդիկ | Կանայք | Թոշակառու | Տեղահանված | Միակողմանի ծնողազուրկ | Երկկողմանի ծնողազուրկ | Հաշմանդամ. | Ընտանեկան Նպաստի համակարգում | Զոհվածների ընտանիքներ | Տնտես. թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | Գրանցված ընտանիքներ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Փարաքար** | 3259 | 3117 | 748 | 8 | 25 | 0 | 160 | 38 | 117 | 1550 |
| 2. | **Թաիրով** | 1721 | 1777 | 407 | 4 | 4 | 4 | 79 | 27 | 16 | 670 |
| 3. | **Արևաշատ** | 1109 | 1189 | 175 | 11 | 10 | 0 | 32 | 26 | 3 | 365 |
| 4. | **Բաղրամյան** | 1486 | 1413 | 285 | 3 | 6 | 0 | 59 | 68 | 2 | 650 |
| 5. | **Նորակերտ** | 1580 | 1618 | 325 | 18 | 9 | 0 | 71 | 52 | 4 | 619 |
| 6. | **Այգեկ** | 780 | 764 | 152 | 1 | 8 | 1 | 39 | 25 | 3 | 313 |
| 7. | **Մուսալեռ** | 1535 | 1528 | 318 | 3 | 4 | 0 | 92 | 34 | 0 | 760 |
| 8. | **Մերձավան** | 1931 | 1915 | 416 | 27 | 17 | 0 | 94 | 85 | 7 | 841 |
| 9. | **Պտղունք** | 1118 | 1124 | 223 | 6 | 3 | 0 | 52 | 30 | 3 | 442 |
| | **Ընդամենը** | 14519 | 14445 | 3049 | 81 | 86 | 5 | 678 | 385 | 155 | 6210 |

## 1.3 **Տեղական ինքնակառավարման մարմինները**

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի ավագանու

2022թ. փետրվարի 8 --ի N 13 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Աշխատակիցների թվաքանակը՝99

Աղյուսակ 3.

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 469.0 | | 469.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1 | 380.0 | | 380.0 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 360.0 | | 720.0 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 320.0 | | 320.0 |
| 5 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 300.0 | | 300.0 |
| 6 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 250.0 | | 250.0 |
| 7 | Գլխավոր ճարտարապետի օգնական | 1 | 220.0 | | 220.0 |
| | Ընդամենը | 8 | | | 2659.0 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | |
| 1 | Գլխավոր ճարտարապետ | 1 | 350.0 | | 350.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Վարչական ղեկավար / մինչև 2000 բնակիչ/ | 2 | 260.0 | | 520.0 |
| 3 | Վարչական ղեկավար / 2000-3000 բնակիչ/ | 2 | 280.0 | | 560.0 |
| 4 | Վարչական ղեկավար / 3000-4000 բնակիչ/ | 4 | 300.0 | | 1200.0 |
| | Ընդամենը | 9 | | | 2630.0 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 342.0 | | 342.0 |
| | Քաղաքաշինության և հողաշինության բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 276.0 | | 276.0 |
| 3 | Գլխավոր մասնագետ | 3 | 248.0 | | 744.0 |
| 4 | Առաջատար մասնագետ | 2 | 223.0 | | 446.0 |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 200.0 | | 400.0 |
| | Ընդամենը | 9 | | | 2173.0 |
| | Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 248.0 | | 248.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 223.0 | | 223.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 200.0 | | 400.0 |
| | Ընդամենը | 5 | | | 1178.0 |
| | Ֆինանսատնտեսագիտական, գնումների,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Բաժնի պետի տեղակալ | 1 | 276.0 | | 276.0 |
| 3 | Գլխավոր մասնագետ | 3 | 248.0 | | 744.0 |
| 4 | Առաջատար մասնագետ | 3 | 223.0 | | 669.0 |
| 5 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 200.0 | | 400.0 |
| | Ընդամենը | 10 | | | 2396.0 |
| | Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 248.0 | | 248.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 223.0 | | 446.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 200.0 | | 200.0 |
| | Ընդամենը | 5 | | | 1201.0 |
| Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին | | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 248.0 | | 248.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 223.0 | | 446.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 200.0 | | 200.0 |
| | Ընդամենը | 5 | | | 1201.0 |
| Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին | | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 248.0 | | 248.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 223.0 | | 446.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 200.0 | | 200.0 |
| | Ընդամենը | 5 | | | 1201.0 |
| Իրավաբանական բաժին | | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 2 | 248.0 | | 496.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 223.0 | | 223.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 200.0 | | 200.0 |
| | Ընդամենը | 5 | | | 1226.0 |
| Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին | | | | | |
| 1 | Բաժնի պետ | 1 | 307.0 | | 307.0 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 248.0 | | 248.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 2 | 223.0 | | 446.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 200.0 | | 200.0 |
| | Ընդամենը | 5 | | | 1201.0 |
| Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ) | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Առաջատար մասնագետ | 8 | 223.0 | | 1784.0 |
| 2 | Առաջին կարգի մասնագետ | 4 | 200.0 | | 800.0 |
| | Ընդամենը | 12 | | | 2584.0 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 1 | Հավաքարար | 5 | 93.0 | | 465.0 |
| 2 | Գործավար | 4 | 170.0 | | 680.0 |
| 3 | Վարորդ | 3 | 150.0 | | 450.0 |
| 4 | Սուրհանդակ | 1 | 150.0 | | 150.0 |
| 5 | Թեժ գծի զանգերի պատասխանատու | 1 | 150.0 | | 150.0 |
| 6 | Նկարահանող օպերատոր | 1 | 170.0 | | 170.0 |
| 7 | Տնտեսվար | 1 | 150.0 | | 150.0 |
| | Ընդամենը | 16 | | | 2215.0 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 1 | Ցանցային ադմինիստրատոր | 1 | 250.0 | | 250.0 |
| 2 | Անասնաբույժ | 3 | 89.61 | | 268.83 |
| | Ընդամենը | 4 | | | 518.8 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ | 99 | | 0 | 22725.8 |

*Քանի որ Փարաքար համայնքը նոր կազմավորվող համայնք է այդ պատճառով դեռևս աշխատակազմի ձևավորման գործընթացը շարունակվում է, ներառյալ ՀՈԱԿ-ները:*

*Համայնքի ղեկավարի միջնորդությամբ նախատեսվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստում տարբեր ոլորտներում, որը կիրակնացվի պետության և մասնավոր հատվածի կողմից, ինչպես նաև մասնակցություն կունենանք անցկացվող սեմինար քննարկումներին, դասընթացների, վերապատրաստման, որոնք կառնչվեն համայնքային ծառայությանը:*

## 1.4 **Անշարժ գույքի կառավարում**

Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման գործընթացն ներառում է դեպքեր, երբ շենք, շինություններն

իրենց գործառական նշանակությամբ չեն օգտագործվում, ինչը ունի հստակեցման կարիք: Նշվածը հնարավորություն կտա գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի և/կամ վարձավճարի չափերը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:

Փարաքար համայնքում դեռևս առկա են խորհրդային ժամանակներից քաղաքացիների կողմից զբաղեցրած, սակայն մինչ օրս չմասնավորեցված շինություններ:

Համայնքում առկա են համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ թվով 65(գծապատկեր 2):




Գծապատկեր 2.

Առկա են համայնքի սեփականությունը համարվող գույքեր, որոնք դեռևս չունեն իրավունքների պետական գրանցում համայնքի անվամբ:

Համայնքում առկա են նախկինում տնամերձ՝ բնակարանային շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար հատկացված, բայց դեռևս չսեփականաշնորհված հողամասեր:

Առկա են դեպքեր, երբ հողամասերի գործառնական և/կամ նպատակային նշանակությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և ունեն հստակեցման կարիք:

## 1.5 **Քաղաքաշինություն և հողաշինություն**

*Հիմնահարցեր*

1. Համայնքի անշարժ գույքի/ հողեր, շենք-շինություն/ ոչ նպատակային օգտագործումը,
2. Ինքնակամ շինություններ առկայությունը /համայնքային հողերի զավթում/,
3. Հողերի սահմանազատման խնդիր, կադաստրային քարտեզի ուղղում,
4. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման շրջանակներում չհասցեավորված շենք-շինությունների և հողամասերի հասցեավորում, կադաստրային ծածկագրերի ուղղում,
5. Բակային տարածքներում ինքնակամ կառույցների առկայությունը,
6. Կցակառույցների խնդրի առկայություն,
7. Տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում,
8. Համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների և հողամասերի վարձակալության դրույքաչափերի,

***Նպատակ***

*Համայքնում պետք է իրականացնել համայնքի սեփականությունը հանդիսացող շենքերի և շինությունների արդյունավետ կառավարում, արփադրական հողերի վերահսկողություն, աշխատանքների արդյունավետ համակարգում, օրինազանց քաղաքացիների հետ բանակցությունների վարում:*

## 1.6 ***Տարածքային զարգացում***

**Հիմնահարցեր**

1. Անբարեկարգ բակային տարածքներ
2. Բնակչության համար նոր հանգստի գոտիների ստեղծում
3. Արտաքին լուսավորության ցանցի մաշվածություն
4. Կանգառասրահների կահավորվածության ոչ բավարար վիճակ

**Նպատակ**

Ապահովել համայնքի կայուն քաղաքաշինական ներդաշնակ զարգացում:

***Խնդիրներ***

1. Նոր զբոսայգիների հիմնադրում և կանաչ տարածքների վերականգնում
2. Նոր մանկական խաղահրապարակների և բացօթյա սպորտային հրապարակների ստեղծում
3. Բնակելի թաղամասերի բակային տարածքների բարեկարգում,
4. Հասարակական տրանսպորտի կանգառներիկառուցում,տեղեկատվական վահանակների տեղադրում
5. Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում:
6. Համայնքի տոնական ձևավորման տարրերի ձեռք բերում, մոնտաժում և տեղադրում

***Բնակարային-կոմունալ տնտեսություն***

**Հիմնահարցեր**

1. Բազմաբնակարան շենքերի տանիքների, տանիքների ջրհորդանների, շենքերը սնուցող ջրագծերի, կոյուղագծերի, շքամուտքերի անբավարար վիճակ:
2. Հիմնական բնակարանային ֆոնդի մաշվածություն

**Նպատակ**

Բարելավել համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների և ենթակառուցվածքների վիճակը: Ապահովել բնակչությանը մատուցվող ծառայությունների բարձր մակարդակ:

***Խնդիրներ***

1. Գերեզմանատների բարեկարգում և հսկողություն,
2. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում,
3. Չլուսավորվող փողոցների, նրբանցքների, մայթերի, բակերի և խաղահրապարակների լուսավորում
4. Լուսավորության ցանցի ավտոմատացման, նոր տրանսպորտա-տեխնիկական սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում,

## 1.7 **Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում**

Համայնքնունի46բազմաբնակարանբնակելիշենքեր,որոնք գտնում ենՓարաքար, Թաիրով, Մերձավան, Նորակերտ, Բաղրամյան և Այգեկ բնակավայրերում(աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

| Բնակավայր | Շենքերի քանակ |
|---|---|
| **Փարաքար** | 3 |
| **Թաիրով** | 7 |
| **Նորակերտ** | 4 |
| **Բաղրամյան** | 4 |
| **Մերձավան** | 26 |
| **Այգեկ** | 2 |

Անցածտարիներինհամայնքումբնակարանայինշինարարությանբնագավառումհամայնքայինմիջոցներ ենհատկացվել, մասնավորապես տանիքների փոփոխման համար:

## 1.8 **Հողօգտագործում**

Փարաքար համայնքի վարչական տարածքը կազմում է 5989.26 հեկտար, որի մեջ գերակշռում են գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 4305.863 հեկտար կամ տարածքի 72%-ը և բնակավայրերի տարածքները՝ 1239.23 հեկտար կամ համայնքի տարածքի 21%-ը:




Գծապատկեր 1.

Ըստ բնակավայրերի առանձնացված հողերը կարող ենք ներկայացնել աղյուսակ 2-ի միջոցով:

*Աղյուսակ 2. Փարաքար համայնքի հոապարածքները՝ ըստ առանձին տեսակների*

| Հ/Հ | Բնակավայրեր | Համայնքի հողային փարածքը /հա/ | Բնակա-վայրերի հողեր /հա/ | Գյուղ. հողեր /հա/ | Արդյ., ը-օգփ. և այլ արփ. նշ. օբյեկփների հողեր /հա/ | Էներգ., փրանսպ., կապի և կոմունալ ենթ. համար /հա/ | Հափուկ պահպանվող փարածքներ /այդ թվում պափմական և մշակութային հողեր/ հա/ | Հափուկ նշ. հողեր /հա/ | Ջրային փարածք /հա/ | Անփառ./հա/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Փարաքար** | 483 | 208.91 | 209.08 | 29.79 | 10.9 | 4.41 | 12.87 | 3.48 | 0.15 |
| 2. | **Թաիրով** | 235 | 104 | 104.54 | 14.8 | 5.44 | 2.2 | 6.43 | 1.73 | 0.04 |
| 3. | **Արևաշափ** | 383.04 | 140.35 | 212.19 | 7.78 | 3.63 | 2.44 | 12.07 | 4.58 | 0 |
| 4. | **Բաղրամյան** | 1076 | 137.04 | 889.87 | 30.37 | 3.76 | 11.25 | 0 | 3.73 | 0 |
| 5. | **Նորակերփ** | 1366.88 | 168.93 | 1134.99 | 41.31 | 1.42 | 5.2 | 0 | 15.03 | 0 |
| 6. | **Այգեկ** | 443 | 65.98 | 362.213 | 9.5 | 2.3 | 3.17 | 0 | 0.3 | 0 |
| 7. | **Մուսալեռ** | 633.38 | 152.97 | 441.48 | 20.99 | 14.09 | 2.12 | 0 | 1.73 | 0 |
| 8. | **Մերձավան** | 942.27 | 139.08 | 668.9 | 55.1 | 3.14 | 4.78 | 68.67 | 2.6 | 0 |
| 9. | **Պփղունք** | 426.69 | 121.97 | 282.6 | 4.54 | 6.51 | 4.11 | 0 | 6.99 | 0 |
| | **Ընդամենը** | 5989.26 | 1239.23 | 4305.863 | 214.18 | 51.19 | 39.68 | 100.04 | 40.17 | 0.19 |

## 1.9 **Գյուղատնտեսություն**

***Հիմնահարցեր***

1. *Գյուղացիական տնտեսությունների անբավարար վիճակ*
2. *Տեխնիկայի բացակայություն*
3. *Ցածր բերքատվություն*
4. *Ոռոգման սակավաջրություն*
5. *Դաշտամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ*
6. *Տոհմային անասնապահության բացակայություն*
7. *Գյուղմթերքների իրացման եւ վերամշակման հնարավորություն-ների բացակայություն:*

***Նպատակ***

*Գյուղատնտեսությունը դարձնել համայնքի տնտեսության գերակա ուղղություն և նպաստել նոր տեխնոլոգիաների (նոր սերնդի կաթիլային համակարգ, հակակարկտային ցանցեր, ոռոգման ցանցում կիսախողովակներով ջրանցքների կառուցում) ներդրմանը, բարձր բեռքատվությամբ մշակաբույսերի ներդրման խթանմանը, ջերմոցային տնտեսությունների զարգացմանը:*

***Խնդիրներ***

- *ոռոգման ցանցերի անմխիթար վիճակ*
- *բերքի իրացման*
- *ֆինանսավորման նպաստավոր պայմաններ:*

## 1.10 **Բնության և շրջակա միջավայր պահպանություն**

- Տարեցտարի հետևողականորեն բարելավվում են կենցաղային թափոնների հեռացման և աղբահանության աշխատանքները:
- Փարաքար համայնքում աղբահանությունը և սանմաքրումը կազմակերպվում է մասնավոր կազմակերպության կողմից, ամբողջ

համայնքում տեղադրված են աղբամաններ: Ծառայությունների մատուցման վերահսկումը կատարվում է «Բարեկարգում» տնօրինության կողմից:

- ❖ Լուսավորության, կանաչապատ տարածքների խնամքի և քաղաքային գերեզմանոցների սպասարկման խնդիրներով ևս զբաղվում է «Բարեկարգում» տնօրինությունը:
- ❖ Խմելու ջրի մատակարարումը իրականացվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից:
- ❖ ***Փարաքար բնակավայրում*** 24 ժամյա ջրամատակարարում ունի բնակչության 70%-ը, և 5 ժամյա ջրամատակարարում՝ 27%-ը:
- ❖ ***Թաիրով*** բնակավայրում 24 ժամյա ջրամատակարարում ունի բնակչության 90%-ը:
- ❖ ***Արևաշատ***, ***Բաղրամյան***, ***Նորակերտ***, ***Մուսալեռ և Պտղունք*** բնակավայրերում ջրամատակարարումը իրականացվում է 24-ժամյա գրաֆիկով, որից օգտվում է բնակչության 100%-ը:
- ❖ ***Մերձավան*** բնակավայրի բնակչությունը 100%-ով օգտվում է 18-ժամյա ջրամատակարարումից:
- ❖ ***Այգեկ*** բնակավայրում գործում է խմելու ջրի 4-ժամյա մատակարարման ռեժիմ:
- ❖ Ոռոգման ջրագծերի ցանցը ունի ամբողջությամբ վերականգման կարիք ամբողջ համայնքի տարածքում:
- ❖ Ամբողջ բնակավայրի տարածքներում կարիք կա կանաչապատ տարածքների վերականգնման և ավելացման: Բնակավայրերում կարիք կա հանգստի և ժամանցի վայրերի ստեղծման և բնակավայրի ամբողջական բարեկարգման:

### 1.11 **Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն**

Փարաքար համայնքի փողոցներ ընդամենը 15 տոկոսն է բարեկարգ, մնացածը ունեն բարեկարգման կարիք:

Բացակայում է կանոնավոր տրանսպորտային հաղորդակցություն շրջակա գյուղերի, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ: Մեծամոր–Երևան երթուղին սպասարկում է նաև որոշակի ներհամայնքային հատված: Որոշ ներհամայնքային հատված սպասարկում է նաև Երևան-Էջմիածին երթուղին: Փարաքար համայնքի Նորակերտ, Բաղրամյան, Այգեկ, Մերձավան, Փարաքար, Թաիրով բնակավայրերով է անցնում 205 համարի երթուղին, իսկ Փարաքար և Թաիրով բնակավայրերով 37 համարի երթուղին: Սակայն նշված երթուղիներում առկա են մի շարք խնդիրներ, և Փարաքար համայնքում տրանսպորտի հարցը ունի լուրջ վերանայումների կարիք:

## 1.12 **Առևտուր և սպասարկում**

Համայնքի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների փոքր և միջին 105 օբյեկտներ, հեղուկ վառելիք՝ 9, տեխնիկական վառելիք՝ 10, հանրային սննդի կետ՝ 10, գազի լիցքավորման կետ՝ 14:



1.Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետներն անցած,ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով , պիտանիության ժամկետի կրկնակի մակնանշմամբ արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով ապրանքի վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացումը :

2. Առևտրի և գովազդի ծառայությունների ոլորտում սպասարկման որակի բարձրացում էլեկտրոնային համակարգի ներդրման միջոցով:

| Հ/Հ | Ծրագրի անվանումը | Համագործակցություն | Անմիջական նպատակ | Հիմնական շահառուները | Սկիզբը Ավարտը |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Առանց պիտանելիության ժամկետի, պիտանելիության ժամկետներն անցած,ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետի կրկնակի մակնանշմամբ արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանելիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով ապրանքի վաճառքը բաղառելու նպատակով հսկողության ուժեղացում** | - | **Վերահսկողության բարձրացման միջողով նվազեցնել բնակչության սննդից թունավորման ռիսկերը և բարձրացնել առևտրի օբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների որակը** | **Բնակչություն** | 2022-2026 |
| 2 | **Առևտրի և գովազդի ծառայությունների ոլորտում սպասարկման որակի բարձրացում էլեկտրոնային համակարգի ներդրման միջողով** | - | **Ծառայությունների թվայնացման միջոցով, բացառել քաղաքացիներից և տնտեսվարողներից լրացուցիչ տեղեկատվություններ տրամադրումը և այցելումները համայնքապետարան** | **Տնտեսվարողներ բնակչություն** | 2022-2026 |
| 3 | **Փողոցային առևտրի վերահսկման, հիգիենայի պահպանման և չթույլատրված վայրերում վաճառքի** | **Ոստիկանություն, համապատասխան մարմինն** | **Բացառել անորակ, ժամկետնանց, ոչ ճիշտ պահպանվող սննդի, նյութերի վաճառքը և ազատել մայթերը** | **Բնակչություն** | 2022-2026 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **դեպքերի հայտնաբերում և կանխարգելում** | **եր** | **առևտրականների կողմից ապօրինի կերպով զբաղեցրած ապրանքներից** | | |

## 1.13 **Համայնքի ձեռնարկությունները**

Համայնքի տարածքում գործում են տարբեր բնագավառի փոքր և միջին, ինչպես նաև խոշոր կազմակերպություններ՝ լոգիստիկայի, տպագրական, սննդարդյունաբերության, շինարարական, հանքարդյունաբերության, ծառայությունների, ոսկերչության ոլորտում, որոնցից շատերը տեղ են գտել խոշոր հարկատուների ցանկում: Աղյուսակ 4-ում ներկայացված են դրանցից մի քանիսը:

Աղյուսակ 4.

| **Կազմակերպության անվանումը** | **Գործունեության ոլորտը** |
|---|---|
| <<**Արմ Պլաստ** >> **ՓԲԸ** | Պլաստիկե իրերի արտադրություն |
| <<**Ջելիֆիշ** >> **ՍՊԸ** | Սպորտային և առողջարարական կազմակերպություններ, հանրային սնունդ |
| <<**Պրինտարմ Դանվեստ** >> **ՍՊԸ** | Տպագրություն |
| <<**Աբռոմիթ** >> **ՍՊԸ** | Սառեցված սննդի կիսաֆաբրիկատների արտադրություն |
| <<**Վանատամ** >> **ՍՊԸ** | Ռեստորանային և հյուրանոցային համալիր |
| <<**Փաթիլա** >> **ՍՊԸ** | Ոսկերչական իրեր, ոսկերչական գործարան |
| <<**Ֆարմ Սիսար** >> **ՍՊԸ** | Դեղագործական ընկերություն |

| | |
|---|---|
| <<**Վագա Ֆարմ** >> **ՍՊԸ** | Դեղատնային ցանց |
| «**Դի-Էյչ-Էլ Վորլդվայդ էքսպրես**», **ներկայացուցչություն Հայաստանու** | Տպագրություն |

## 1.14 **Կրթության**, **մշակույթի**,**սպորտի**, **երիտասարդության հետ տարվող աշխատանքներ**

Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միանշանակ միտված են լինելու քաղաքակիրթ, խելացի, ստեղծագործ,նախաձեռնող,կարողունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը: Փարաքար համայնքում գործում են հիմնական 9 միջնակարգ դպրոցներ,որտեղ սովորում են թվով 3513 աշակերտ, 8 գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որտեղ հաճախում են թվով 680 երեխա: Արևաշատ և Բաղրամյան բնակավայրերի դպրոցներում գործում են նախակրթարաններ, որտեղ հաճախում են թվով 42 երեխա : Փարաքար համայնքի 8 գործող ՆՈՒՀ-ից 6-ը ունեն վերանորոգման կարիք, որից Այգեկի և Պտղունքի մանկապարտեզները՝ հիմնանորոգման, իսկ Արևաշատի մանկապրտեզը հիմնովին վերանորոգվել է , սակայն կոմունիկացիոն և փաստաթղթային աշխատանքները դեռ չեն ավարտվել:

**Հիմնախնդիրներ**

- Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը, մանկապարտեզ հաճախող երեխաներին ապահովել անհրաժեշտ շենքային և գույքային պայմաններով,
- Համապատասխան միջոցներներ ներդնել համայնքիայն դպրոցներում, որտեղ չի գործում «Տաք սնունդ» ծրագիրը :
- ՆՈՒՀ-երում և դպրոցներում կա կադրային պակաս /լոգոպեդ, երաժշտության մասնագետ, հոգեբան, ֆիզկուլտ հրահանգիչ, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, կենսաբանության, ռուսաց լեզվի մասնագետներ:
- Բարեկարգել ՆՈՒՀ-երի բակային տարածքները՝ կանաչապատել և համալրել անհրաժեշտ խաղային գույքով:

- ❖ նախադպրոցական ուսումնական հաստատությունները ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով և խթանել մեդիագրագիտության զարգացմանը /կադրերի գործուղում, փորձի փոխանակում, վերապատրաստում:

- ❖ հաշվի առնելով ոչ ֆորմալ կրթության արդիականությունը՝ ձեռնարկել միջոցներ համայնքում գործող ուսումնական հաստատություններում ոչ ֆորմալ կրթություն իրականացնելու համար:
- ❖ խթանել ֆորմալ կրթական համակարգում ներգրավված անձանց մասնակցությունը ոչ ֆորմալ կրթության միջոցառումներին տեղական և միջազգային մակարդակներում,
- ❖ ապահովել սակավ հնարավորություններ ունեցող խմբերի ներգրավվածությունը ոչ ֆորմալ կրթության միջոցառումներին/ձեռնարկումներին (հաշմանդամներ, համայնքի սոցիալապես անապահով երիտասարդներ և խոցելի խմբեր),
- ❖ խթանել տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների օգտագործումը ոչ ֆորմալ կրթության համակարգում
- ❖ Համագործակցել այլընտրանքային նախադպրոցական ուսումնական ծրագրով աշխատող ուսումնական հաստատությունների հետ (փորձի փոխանակում, կադրերի վերապատրաստում):

## Մշակույթ

Փարաքար համայնքն ունի թվով 7 մշակույթի տներ, բոլորը ենթակա են վերանորոգման, իսկ Մուսալեռ բնակավայրում անահրաժեշտ է հիմնովին վերակառուցել նախկին մշակույթի տունը: Համայնքում կա 7 գրադարան, 1 արվեստի դպրոց, 1 սպորտ դպրոց և Մուսալեռ բնակավայրում՝ 1 սպորտ դահլիճ: Փարաքար համայնքում համեմատաբար քիչ են մշակութային օջախները, սակայն այդ բացը կարող են լրացնել տարածաշրջանում գտնվող մշակութային հին և մեծ ճանաչում ու նշանակություն ունեցող օջախները՝ Մուսալեռան հերոսամարտին նվիրված հուշակոթողը, թանգարանը, Սբ . Ամենափրկիչ եկեղեցին, Փարաքարի Սբ. Հարություն և Մարիամ Աստվածածին եկեղեցիները և Արևաշատ բնակավայրի Սբ. Աստվածածին եկեղեցին: Հաշվի առնելով աշխարհագրական դիրքը և վերջին տարիների ընթացքում բնակչության մեծ հոսքը՝ / մայրաքաղաքից, արտերկրից/ նախատեսվում է բոլոր կազմակերպչական աշխատանքների և անհրաժեշտ ռեսուրսների ներդրման միջոցով զարգացնել բնակիչների մշակութային և ժամանցային առօրյան համայնքում :

***Հիմնախնդիրներ***

- վերանորոգել համայնքում գործող բոլոր մշակույթի տները, անցկացնել ջեռուցման համակարգ, իսկ Մուսալեռ բնակավայրում գտնվող մշակույթի տունը հիմնովին վերակառուցել ,
- լուծել գրադարանների ջեռուցման խնդիրը,
- վերանորոգել Փարաքար բնակավայրի արվեստի դպրոցը,
- մշակույթի տներում հատկացնել առանձին սենյակներ տարեց բնակիչների ժամանցն ու հանգիստը արդյունավետ կազմակերպելու համար, տրամադրել համապատասխան գույքային միջոցներ / նարդի, շախմատ, դոմինո , ձեռագործության համար անհրաժեշտ՝ թելեր, շյուղեր և այլն/,
- հիմնել ազգային արվեստի ու արհեստի վերաբերյալ խմբակներ / ասեղնագործություն, գորգագործություն, կավագործություն/

***Նպատակ***

Համայնքում ունենալ աշխույժ մշակութային կյանք՝ հագեցած մշակութային տարաբնույթ միջոցառումներով:

**Սպորտ և երիտասարդություն**

Փարաքար համայնքն ունի ձևավորված Երիտասարդական խորհուրդ՝ ինը բնակավայրերի երիտասարդներից կազմված՝ խորհրդի ղեկավարով և կամավոր խմբերով: Համայնքն ունի Սպորտ դպրոց՝ բռնցքամարտի և կարատեի խմբակներով, որի սաները միջազգային հարթակներում հասել են մեծ հաջողությունների: Ունի ֆուտբոլային թիմ:

***Հիմնախնդիրներ***

- Գործող երիտասարդական խորհրդի համար բոլոր բնակավայրերի վարչական շենքերում առանձնացնել սենյակներ, կահավորել և զինել համապատասխան տեխնիկայով ,

- ❖ Սպորտ դպրոցի վերանորոգում և ջեռուցում, մարզական գույքի ապահովում, սպորտ դպրոցի հարակից տարածք բարեկարգում, մարզիկներին համապատասխան մարզահագուստի հատկացում,
- ❖ հաղթանակած մարզիկներին խրախուսելու և ոգևորելու համար համայնքի բյուջեից միջոցների հատկացում,
- ❖ Բոլոր բնակավայրերում սպորտային խմաբկներ հիմնելու համար տարածքների հատկացում,
- ❖ ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ և սպորտլանդիաներ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից միջոցների հատկացում,
- ❖ բոլոր ինը բնակավայրերում բացօթյա խաղահրապարակների կառուցում, որտեղ կտեղադրվեն նաև մարզասարքեր՝ բնակիչների մարզվելու համար:

## Երիտասարդական ոլորտի ակտիվացում և ներգրավում

### *Հիմնահարց*

1. համակարգել երիտասարդական ոլորտի ակտիվացումը և ներգրավումը համայնքում իրականացող միջոցառումներին և կամավորական աշխատանքներին ,
2. աջակցել զբաղվածության և աշխատանքի տեղավորմանը ,
3. կազմակերպել երիտասարդների ժամանցը ,
4. աջակցել խելացի երիտասարդների մասնակցությանը միջազգային ծրագրերին:

### *Նպատակը*

Երիտասարդական ոլորտի ակտիվացումն ու ներգրավումը հնարավորություն է տալիս ստեղծել կապ մյուս բնակավայրերի երիտասարդների միջև` ապահովելով փորձի և գիտելիքի փոխանակում: Կազմակերպել երիտասարդների ներգրավումը համայնքում կազմակերպվող միջոցառումներում և կամավորական աշխատանքներում : Համայնքում երիտասարդների մասնակցության ու ներգրավման աստիճանն ու ազդեցությունը բարձրացնելու նպատակով աջակցել երիտասարդների գաղափարների իրականացմանը և խնդիրների լուծմանը : Խթանել նրանց մասնակցությունը միջազգային հարթակում իրականացվող

նախագծերում և մրցույթներում օգնել երիտասարդներին հասկանալու համայնքում իրենց դերի հետ կապված պատասխանատվություն վերցնելու կարևորությունը :
Զբաղվածության և աշխատանքի տեղավորման հարցերը երիտասարդների ամենաարդիական խնդիրներից են: Այս խնդիրների լուծման մեջ առաջնային է ունենալ համապատասխան աջակցություն սեփական բիզնեսի նախաձեռնման և հիմնադրման, տեղում զբաղվածության կենտրոնների ստեղծման և շարունակական գործարկման, ինչպես նաև կարիերայի կողմնորոշման ոլորտում: Երիտասարդները կարող են խթան հանդիսանալ համայնքում նման կենտրոնների ստեղծման համար և համատեղ պլանավորել, թե ինչպես կարող են դրանք աշխատել և առավելագույն աջակցություն ցուցաբերել դրա կարիքն ունեցող յուրաքանչյուր երիտասարդի:
Որակյալ ժամանցի կազմակերպման հարցը բավականին լուրջ է դրված: Շատ համայնքներում երիտասարդները բառացիորեն չունեն մի վայր, որտեղ կարող են հանդիպել, շփվել, որևէ բան սովորել, հետաքրքիր անցկացնել իրենց ժամանակը: Համայնքներում նման վայրեր կարող են լինել երիտասարդական կենտրոններն ու հայորդաց տները, մշակութային ակումբները, խաղահրապարակները, սպորտային հրապարակները, հոբբի ակումբները և այլն: Ուստի՝ երիտասարդները, համախմբվելով, օրինակ՝ ֆուտբոլի կամ երաժշտության շուրջ, կարող են դիմել տեղական իշխանություններին՝ խնդրելով ֆուտբոլ խաղալու տարածք/դաշտ, գնդակներ և հագուստ տրամադրել կամ տարածք ապահովել պարի պարապմունքների համար:

***Գործողություններ***

- Ձևավորել երիտասարդական խորհուրդ:
- Կազմակերպել երիտասարդական խորհրդի նիստերը և վեր հանել խնդիրները:
- Կազմակերպել հանդիպում քննարկումներ՝ ելնելով արդի պահանջներից:
- Ստեղծել երիտասարդների համար տարբեր մշակութային համատեքստերից եկած մարդկանց հետ շփումների, ուսուցման, մշակութային իրազեկության հնարավորություններ:
- Աջակցել երիտասարդներին զարգացնել իրենց քննադատական մտածողությունը և հասարակության, ուժի, սոցիալական և քաղաքական համակարգերի աշխատանքի հետ կապված գիտելիքները:

### 1.15 **Զբոսաշրջություն և հանգիստ**

Ժամանակակից զբոսաշրջությունը համարվում է տնտեսության արագ և դինամիկ զարգացով ճյուղերից մեկը: Փարաքար համայնքը մեծ ուշադրություն է դարձնում պատմամշակութային վայրերի և կոթողների պահպանմանը: Համայնքում գործող եկեղեցիները աչքի են ընկնում իրենց բազմադարյա պատմությամբ, գրավչությամբ, շքեղությամբ: Փարաքար համայնքը կարող է վերածվել զբոսաշրջային կարևոր տարածքի ի շնորհիվ հյուրանոցային տնտեսության: Հյուրանոցային տնտեսության համար Փարաքար համայնքի Փարաքար, Թաիրով, Մուսալեռ բնակավայրերը հատկապես ունեն մի շարք առավելություններ, քանի որ գտնվում են շատ մոտ «Զվարթնոց» օդանավակայանին և իհարկե գտնվում են Երևանի և Էջմիածնի կենտրոնում, Փարաքար համայնքով է անցնում Երևան-Էջմիածին մայրուղին, որոնք երկուսն էլ ՀՀ զբոսաշրջային խոշոր կենտրոններ են : Փարաքար համայնքում առկա է զբոսաշրջային ներուժ:

Համայնքի բնակավայրերում գործում են հանրային սննդի մի շարք օբյեկտներ:

***Զարգացման խնդիրներ.***

- Համայնքի տեսարժան վայրերի, պատմամշակութային կոթողների ուղեցույցների կազմում
- Հյուրանոցային տնտեսությունների գույքագրում
- Համայնքի վարչական շտեմարանի կազմում և վարում
- Համայնքի քարտեզագրում
- Տեղեկատվական ցուցանակների տեղադրում
- Տեղեկատվական կենտրոնի ստեղծում
- Գյուղական բնակավայրերում հյուրընկալ ընտանիքների ներգրավում
- Տեղական արտադրողների, ձեռնարկությունների, աշխատանքի արտադրանքի ներգրավում զբոսաշրջության ոլորտ
- Համայնքի բարեկարգում

Զբոսաշրջության զարգացման համար համայնքը նախատեսում է՝

- ❖ նպաստել համայնքում ժամանակակից չափորոշիչներին համապատասխան հյուրատների և հյուրանոցների ստեղծմանը,
- ❖ տուրիզմի կենտրոնի հիմնմանը,
- ❖ առցանց հարթակի ստեղծմանը, որի միջոցով համայնքը ճանաչելի կդառնա և Հայաստան այցելած զբոսաշրջիկների ուշադրությունը կիրավիրվի դեպի Փարաքար,
- ❖ քաղաքաշինական ներդաշնակ զարգացմանը,
- ❖ նոր զբոսայգիների, կանաչ տարածքների հիմնմանը,
- ❖ ժամանակակից խաղահրապարակների հիմնմանը,
- ❖ սպորտային համալիրի ստեղծմանը,
- ❖ արտաքին կապերի ստեղծմանը,
- ❖ այլ երկրների հետ համագործակցությանը / նմերդրումներ/,
- ❖ տարբեր համայնքների հետ համագործակցությանը / փորձի փոխանակում, շփում…/,
- ❖ մշակութային օջախների հիմնմանը,
- ❖ ազգային մշակույթի, սովորույթների վերհանմանը,
- ❖ տուրիստական կազմակերպությունների հետ համագործակցությանը:

### 1.16 **Առողջապահություն**,**սոցիալական ոլորտ**

***Խնդիրներ***

Համայնքի տարածքում գործում է Փարաքարի բուժամբուլատորիան, Թաիրովի բուժամբուլատորիան, Բաղրամյանի բուժամբուլատորիան, Նորակերտի բուժամբուլատորիան, Մերձավանի բուժամբուլատորիան իր 1 բուժմանկաբարձական կետով (գ. Այգեկ) և Մուսալեռ բուժամբուլատորիան իր 2 բուժմանկաբարձական կետերով (գ. Արևաշատ և գ. Պտղունք): Փարաքար համայնքին սպասարկումէ հիմնականում Վաղարշապատի պոլիկլինիկան:

Պտղունք, Արևաշատ, Այգեկ բնակավայրերում չկան բուժամբուլատորիաներ: Կարիք կա բուժմանկաբարձական կետերը փոխարինել բուժամբուլատորիաներով: Գրեթե բոլոր բուժամբուլատորիաները և բուժմանկաբարձական կետերը ունեն վերանորոգման կարիք և նորագույն բժշկական սարքավորումներով և կահույքով վերազինման կարիք (պետություն-համայնք համագործակցության շրջանակներում), սակայն բուժամբուլատորիաներից շատերը ունեն նաև հիմնանորոգման կարիք:

***Հիմնահարց***

1. Բուժամբուլատորիաների և բուժմանկաբարձական կետերի վերանորոգում, նորագույն բժշկական սարքավորումներով վերազինում,
2. պրոֆիլակտիկ զննումների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովվում:

Համայնքի առողջապահության համակարգի բժշկական հաստատությունների կառավարման կառուցվածքների արդիականացում (ղեկավար անձնակազմի վերապատրաստում), մենեջմենթի թափանցիկ կազմակերպչական կառուցվածքի ներդնում, բժշկական հաստատությունների՝որակյալ կադրերով համալրումև առկա մասնագիտական ներուժի հմտությունների բարելավում, ընտանեկան բժշկության համակարգի լիարժեք կայացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

***Նպատակ***

Փարաքար համայնքի բնակիչներին ապահովել բարձրակարգ բժշկական սպասարկում

## Սոցիալական ոլորտ

Համայնքում սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման գերակա նպատակն է՝ սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, մասնավորապես՝

- ❖ բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունների ընդլայնում,
- ❖ սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում,
- ❖ սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում,սոցիալական ծառայությունների կառավարման,նյութատեխնիկական բազայի բարելավում,

- ❖ սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավում, որտեղ կարևորվում են հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջև տեղեկատվության փոխանակման, համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման

մեխանիզմների մշակումը և ներդնումը, ինչպես նաև պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը և տվյալների շտեմարանի ստեղծումը,

❖ սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում, մասնավորապես կարևորվում է սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ փնտրելու հմտությունների զարգացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, ծերերին խնամելու, այդ թվում՝ տնային պայմաններում խնամք կազմակերպելու համար խնամատարների վերապատրաստումը,

❖ համայնքում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման և այդ խմբերի սոցիալական պաշտպանության նուղղված պետական նպատակային ծրագրերի շրջանակներում մարզային ծրագրերի մշակում, դրանց կատարման ապահովում,

❖ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում վերջիններիս հետ տարվող աշխատանքների հետ կապված պատասխանատվություն կրող բոլոր կառույցների՝ ոստիկանության, դատախազության, կրթական, առողջապահական համակարգերի, ցերեկային կենտրոնների, դատաիրավական համակարգի, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների համակարգված փոխհամագործակցության իրականացում՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովման նպատակով,

❖ համայնքում ՀՀ ոստիկանության ԱԳԲ-ների, ՏԻՄ-երի, ՄՍԾ-ների և ԽՀՀ-ի պատասխանատուների հետ համատեղ, անչափահասների հիմնախնդիրների արագ արձագանքման և վաղ հայտնաբերման նպատակով հանրակրթական դպրոցներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացում,

❖ համայնքում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության նպատակով համայնքային ՀԿ-ների հետ շարունակական համագործակցության ապահովում և ծրագրերի իրականացում,

❖ հաշմանդամության հարմարվողականության ապահովվում,

❖ կանանց դերի բարձրացում,

❖ սոցիալական բնակարանաշինություն,

- ❖ աղքատության նվազեցում:

*Հիմնահարցեր*

- ➢ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցման անհրաժեշտություն,
- ➢ տարեցների և հաշմանդամների ցերեկային խնամք,
- ➢ տարեցների և հաշմանդամների տնային խնամք,
